



ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Redaction du journal at „Hantes Ansoria“ Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Հերկայ 1897 տարեշրջանի Փոքիկորդոյ համար տարեկան 10 ֆր " " 1/2 " 5 " Արտասահմանի համար " 12 " " " 1/2 " 6 " Կանխիկ վճարելի	Համակ պրամ եռայն խրկի հետեւեալ հասցեով ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՐԱՎՈՒՆԿ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ) Редакция на вѣстникъ „Иравункъ“ ВАРНА (България).	Rédaction du journal „Iravounk“ VARNA (Bulgarie)	Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք ես չեմ դրոշմիր եւ յարմար դատ ուսմանի միայն եւ հրատարակ ուիմ ամբողջովի կամ մասամբ Ծանոցման տողը 20 սանիմ. երեքէն աւելի անգամներու համար 20 առ 100 զեղը կը լինի:
--	--	---	--

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ

Չինք յուսար որ յաւանդուող
թիւն մը երեւայ մեր կողմէն՝ ը-
սել թէ ցարդ ջանք եւ զոհողու-
թիւնը չ'անայցնենք՝ մեր միջոցնե-
րուն ներած չ'ափովը գոհ ընելու
համար սեր ընթերցողները թեր-
թին թէ՛ պարունակութեան եւ թէ՛
աժանութեան մասին:

Առաջին տարեշրջանի համար,
որ իրապէս գրեթէ ութ ամիս մի-
այն կը բաղկատար թերթին դադ-
րելուն պատճառաւ եւ ուր հետեւ-
ւորաբ 32 թիւ միայն կրցինք հը-
րատարակել, բաժնեգին որոշուած
էր 8 ֆր. Պուշկարիոյ եւ 10 ֆր.
արտասահմանի համար:

Սեպտեմբեր ամսոյ մէջ թեր-
թին կցեցինք շաբաթական Թա-
ւելուած մը, զոր շարունակեցինք
մինչեւ մարտի վերջը՝ առանց բաժ-
նեգին վրայ յաւելում մը ընելու:
Ընդհակառակը՝ մեր ընթերցողնե-
րուն թիւը աւելցած տեսնելու փա-
փաքով յարմար տեսանք անցեալ
տարեշրջանի հետ բաղդատմամբ
աւելի աժան գին մը, որ է 10-12
ֆր. նշանակել երկրորդ տարեշրջա-
նին համար:

Քաջալերուած այն համակրու-
թիւնէն, զոր գտանք Պատուար-
ժան հասարակութիւնէն եւ համա-
կերպելով բաղմամբ անձերէ
յայտնուած փափաքին՝ ապրիլի
սկիզբէն թերթը վերածեցինք կի-
սաշաբաթաթերթի, որոշելով ներ-
կայ տարեշրջանի Բ. վեցամսէի
բաժնեգին վրայ միայն մէկ ֆր. ի
յաւելում մը ընել, եթէ մեր նոր
ծախքերը գէթ մասամբ հաւասա-
րակշիւելու չ'ափ նոր բաժանորդներ
չ'աւելնան մեր հին բաժանորդնե-
րու թիւին վրայ՝ մինչեւ յուլիսի
սկիզբը:

Գալով իրաւունքի խմբագ-
րական բարեփոխութեան, որ ա-
մեն ուշագիւր ընթերցողի զգալի
եղած է անշուշտ քանի մը ամիս
ներէ ի վեր, մեզ անկ չէ ծանոթ-
նալ այս կէտի վրայ, եւ կը թու-
ղունք զայն ընթերցողներու գնա-
հատութեան՝ միայն յիշեցնելով ի-
րենց թէ այս բարեփոխութիւնն

ալ առանց գրամական զոհողու-
թեան չէ կատարուած:

Այս բացատրութիւնները տալ
աւելորդ չ'տեսանք՝ թախանձագին
խնդրելու համար մեր այն պատ-
ուարժան բաժանորդներէն, որ տա-
կաին չեն վճարած իրենց բաժ-
նեգինը, փութալ զրկելու մեզ
զայն նկատի ունենալով մէկ կողմէ
մեր ջանքն ու զոհողութիւնները
թերթը հետզհետէ աւելի օգտա-
կար հանգիստեցնելու, միւս կողմէ
այն դժուարութիւնները որոց կը
մասնէ մեզ բաժանորդներու անհո-
գութիւնը բաժնեգինները վճարե-
լու մասին որոնցմով պիտի հագա-
ցուն մեր ծախքերը՝ ամէնքն ալ
կանխիկ:

Խմբագր. "Իրաւունք"ի

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Երկար դարերէ ի վեր հայ ազգը
ստրկական լուծի տակ ճնշուած ու
թմրած՝ անզգայութեան զրկեթէ
մօտեցող համբերութեամբ կը հան-
դուրէր իր ծանր ճակատագրին եւ
չատ աննշան էր անոր թիւը, ո-
րոնք ընդ ողօտ կը նշմարէին ա-
զատութեան գաղափարը:

Այդ նուիրտի լուծը, օսմանեան
բռնապետութեան հայալինջ քա-
ղաքականութեան բնական հետե-
ւանք, օր քան զօր կը ծանրանար
եւ հետզհետէ աւելի կը ճնշէր
թերթահայութիւնը:

Երբ միայն Սաղմոս ու Նարեկ
ստրկեցող մեր հին դպրոցները
վերանորոգութեան մը ենթարկուե-
լով սկսան ուսնալ սերունդներ ըն-
ծայել ողբին, մեր ստրկական վի-
ճակը զգացողներու թիւն ալ տա-
կաւ աճեցաւ:

Հայ բանաստեղծներ ու գրողե-
անք իրենց մաքի արատաւութիւն-
ներով ջանացին հայ ժողովրդին
գիտակցութիւն ներշնչել իր կործա-
նաբեր կացութեան. այս ջան-
ք'ըր սկսան դարուս գրեթէ կէսէն
ի վր:

Պէրլինի գաշնագրին մէջ հայ-
կական խնդրոյն ներմուծումը նոր,
մեծ զարկ մը տուաւ հայ ժողո-

վրդի ինքնաճանաչութեան. ազա-
տագրութեան սիրով սկսան բա-
բախել երիտասարդ հայ սրտեր,
ինչ որ անժանօթ էր հին սերունդ-
ներուն եւ դարաւոր խուլ առնչու-
թիւնը ընդդէմ իշխող կոշտ ցե-
ղին՝ ստացաւ նոր ծաւալ ու սաստ-
կութիւն:

Վաստիկ ափանց վրայ ապրող
հայութիւնը միայն խօսքով, պղա-
տնական արտայայտութիւններով
կը վերաբերուէր դէպ ի նոր, ա-
զատասէր սգին, իսկ գաւառացիք,
որ գրապէս, փորձառապէս կը
զգային օտար լուծին ամբողջ ծան-
րութիւնը, հոգւով եւ մարմնով
փարեցան ազատութեան գաղա-
փարին որ զիրենք պիտի առաջ-
նորդէր դէպ ի յեղափոխութեան
հանգրուանը:

Արդէն տակէ տասը տարիներ
առաջ գաւառացի երիտասարդու-
թիւնը պատրաստ էր սգի ի բռն
մաքառելու ընդդէմ բռնութեան եւ
կը սպասէր առաջնորդի կամ հրա-
մանատարի մը:

Առաջնորդը պէտք էր որ գար
աւելի բաւաւորաւ կեդրոնէ մը եւ
աւելի կը սպասուէր Պօլսէն: Բայց
վոտորասուն երիտասարդութիւնը
ընդհանրապէս համալուծաշակ սը-
նունգով մեղկայած իր շրթ-
ներով միայն արամաբարութիւն
ցոյց կուտար ազգային դատին
պաշտպան հանդիսանալու: Չոր
բառերով միայն կը համակրէր,
ճիշդ ինչպէս կընէր Լոնտոնի
Անգլիկ հայկական ընկերութիւնը:

Գաւառացիք հողիւ զայս զգա-
ցիր էին ու կը պատրաստուէին
առանց Պօլսէն մասնակցութիւն
մը սպասելու՝ իրենց մէջ կողմա-
կերպութիւններ գոյացնել ինքնա-
պաշտպանութեան միջոցներ հայ-
թայթելու համար, եւ ոչ ոք հասան
Ռուսահայ համալսարանականներ,
սոցալային սուրբ դատին իրապէս
նուիրուած երիտասարդներ, որոնք
մտան թերթահայութեան ամէն խա-
ւերուն մէջ, գտան պատրաստ ե-
րիտասարդութիւն մը, որ արդէն
միայն առաջնորդի մը կը սպասէր
եւ զայն գտած համարեց յանձին
առաւահայ յեղափոխականներու:

Այլ, ափսոս որ համալսարանա-

կանները գիտակից չէին տեղական
հանգամանքներու, չ'ունէին փոր-
ձառութիւն մարդոց եւ իրաց մա-
սին որպէս զի նպատակաւորաբ
ուղղութիւն մը տային իրենց գոր-
ծունէութեան:

Մեր յեղափոխութեան աչքի
զարնող գլխաւոր թերութիւննե-
րէն մին էր այն անհեռատեսու-
թիւնը, որով թշնամին զարթոցին
չատ կանուխէն. պարապ ուղմուկ-
ներով քնացող օձին պոչին վրայ
կոխեցին: Իրբ ասոր ապացոյց
բաւ կը համարէին յիշել միայն՝
փոքր հայքի մի քանի քաղաքաց
մզկիթներու մէջ թրքերէն լեզուով
յեղափոխական յայտարարութիւն-
ներ փակցնելու կամ ցրուելու ան-
նպատակ ձեռնարկը:

Գուցէ իրենց տեսակէտով ան-
նպատակ չէին այս կարգի արարե-
նար, որովհետեւ հաւանականա-
բար իբր ընկերավարական իրենք
կուզէին հայուն հետ թուրքն ալ
ազատել բռնութեան ձեռքէ:

Յնորք մըն էր այս եւ թուրք
տարրին բարքերուն ու գաղափար-
ներու մասին ազդեցութեան հետե-
ւանք:

Մեր նպատակը չէ մեր ներկայ
ուղեմները պարզապէս վերագրել
հայ յեղափոխական շարժումնե-
րուն եւ կազմակերպութեան թե-
րութեանց:

Սակայն այլեւս անխօսելի է որ
աններելի թերութիւններ կային եւ
զիցմուծներ եղան:

Չայս հաստատելէ յետոյ, պէտք
է յաւելուէր որ յեղափոխութիւնը
բաւական հեռատես չ'զգտնուեցաւ
նաեւ եւրոպական քաղաքականու-
թեան մասին զոր ընդհակառակը
բոլորովին արհամարհել կը թուէր՝
յայտարարելով որ գիւանագիտու-
թիւնը պէտք չէ որ բնաւ ալդէ
յեղափոխութեան վրայ, այլ յեղա-
փոխութիւնն է որ վճռական ող-
բեցութիւն պիտի գործէ գիւանա-
գիտութեան ընթացքին վրայ:

Փորձը ցոյց տուաւ որ հաշիւը
սխալ էր եւ գիւանագիտական հայ-
կացիները հիմնուած էին անսահ-
ման անբարոյականութեան մը
վրայ, որ թող տուաւ թուրք
բռնապետութեան եւ իսլամ խու-

ժանին խել հայ ազգէն իր նիւթական քաղերը և հարկուր հազարաւոր մահաւորներ :

Այս սոցալիսի դասերէն պէտք է օգտուինք , փորձառութեան ցոյց տուած փրկարար շաւղէն ընթացանք : Ըսել չենք ուզեր բնաւ թէ ա'լ գաղթելու ենք յեղափոխական գաղափարներ սնուցանել : այդ անկարելի է արդէն և մեր ձեռքը չէ , վասնզի թուրքը ինք արդէն չպիտի ձգէ որ հայ ազգը հանգարտի , վճռած ըլլալով հայկական խնդիրը օչնչացնել հայը ջնջելով : Ասոր ակնհիւս գլխաւոր ապացոյցը սա է որ թուրքին հաւատարմութեամբ ընդհանուր հայութեան դէմ է . հարուածը ուղղուած է աւելն հայու գլխին , ըլլալ յեղափոխական թէ պահպանողական , ազգասէր թէ թրքասէր , հարուստ թէ աղքատ :

Ինքնապաշտպանութեան հարկը ամենուր համար է և ընդհանուր ճիշդութեամբ պէտքը անխուսափելի , եթէ չենք ուզեր ոչխարի հօտի նման իրարու հետ մերթուիլ անձայն , անմեռնչ :

Հայ ժողովուրդը պարտաւոր է սակայն այսքան դառն փորձառութիւններէ ետք՝ շարժիլ չըջհայեակաց արթնութեամբ և իր ուժերուն ու պէտքերուն գիտակցութեամբ և իրմէ դուրս վանիլ եւ սամուր , շահասէրը և պոռոտախօսը , հրապարակաւ բիշ խօսիլ և խոհեմութեամբ ու անշուշտ պատրաստուիլ այն ժաման համար , զոր վնջ մեծ Գաւառահայութեանց Արեւելքի համար մղելիք պայքարը կամ ուրիշ նպատակաւ հանդամանքներ պիտի հնչեցնեն մօտ տարիներու մէջ :

Յ. Գ.

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

Մեր բնատոհմային տխուր յատկանիշներէն մէկն է ապահովագէտ անտարբերութիւնը : Այս զգացումը զոր կերեւայ թէ նախապատմական ժամանակներէ ի վեր մեր եկող գացող սերունդներն ունեցած են ու շատ կենդանի փաստերով ապացուցած վայն յոյժ հոգեբանական պարագաներու մէջ , հիմակ ալ դեռ կը շարունակէ մեր խառնուածքին ու կազմութեան վրայ իր տիրական ազդեցութիւնը բանեցնել , բազմաթիւ կենսական առիթներու մէջ անընկճելի պատուար ու խոչ կանգնել , ու վիժեցնել այնպիսի գործեր որոնք թերեւս մեր բարոյական , նիւթական , հանրային ու անհատական սեղմ կապանքներէն արձկուելու պիտի ծառայէին մեծագէտ , ու տային անանկ արդիւնքներ զորս ձեռք բերելու համար այլ եւս գուցէ չբաւէ մեր արդի ուժատ գրութիւնը :

Եթէ մեր հին պատմութեան էջերը քրքրուին ու վննուին , աւելն մէկ քայլի ուժգնօրէն դուրս պիտի ցայտեն անտարբերութեան առաջ բերած աղէտները :

Բայց այս ախտին մէկ պատճառած քննադատը ըմբռնելու համար պէտք չունինք հեռաւոր ժամանակներու մշուշին մէջ խորխորելու . մեր աչքին տակը , մեր մօտը , մեր մէջն եղածը արդէն արտասովոր կերպով պերճաւոր է այս մասին մեզ համոզելու համար :

Ամեն մարդ իր հաշտին կը կըրկնէ յաւիտենական զոռելի բանաւնէ . « Ինչո՞ւն պէտք , թող ուրիշները մտածեն . ազգին գիտնալիք բանն է » :

Անհատագէտ՝ բայց ըստ ինքեան հաւաքագէտ արտասանուած այս բանաւնէր / կուգայ սա արդիւնքին կըյանդի որ ազգայինհանրային կենսական գործերը անսանձ կը մնան , գիպուածական հովերու կողմէ քշուելով տարուելով շարունակ :

« Ես չեմ խառնուիր » ըսող ոհտարբերը չի գիտեր որ ազգի մը , նոյն իսկ , աւելի ընդորձակ խօսելու համար , մարդկային սեռին պատկանած ըլլալու իրաւունքը իր վրայն ունեւորական անմիջական պարտք կը դնէ իր կարողութեան ներածին չափ օգտակար հանգիստաւալ աշխատի բանի մը ուսկից ամբողջ ազգը կամ համայնը մարդկութիւնը պիտի նպատակաւորուի : Ընդունինք որ մենք , ամեն մէկ հայ անհատ ընդհանուր մարդկութեան օգնելու գիրքին մէջ չի գտնուիր կամ նոյն իսկ գտնուելու չէ , և սակայն միւս կողմէ , ազգային օգտակարութեան , համերաշխ գործունէութեան գաղափարը մարմին կառնէ ու սաստիկ կը խտացնէ մեր պարտականութեան նուիրականութիւնը :

Պարագաներ կան ուր ձեռնպահութիւնը ոճրի մը համեմատութիւնը կը ստանայ : Եւ աչքի տուելու բերելով այն ողբալի վիճակը ուր այժմ կը հեծէ մեր ազգը , ինչպէ՞ս լուիլ ու չգատապարտել անոնք որ պղտատնական տնտարբերութեամբ , երջանկութեան մէջ ծփացող էակի մը բովանդակ անզգամութեամբ կը մուտան :

« Ինչեքո՞ւն պէտք , մենք ազգին գործերուն չենք խառնուիր » :

Մեր բարքերուն վրայ ծանրացող այս աղէտալի հիւանդութեան գարմանը շուտով ձեռք բերել յուսալը յիմարութիւն է : Ինչոր առաջին միջոցը գիտակցութիւնը պիտի ըլլայ . ամեն մարդ երբ ընդունի պահ մը թէ անտարբերութիւնը հիւժու միջոցներ ձեռքած է իր արեան մէջ , այլեւս կը զինուի անոնց դէմ մաքառելու միջոցն որ բնաշինք ընէ :

* *

Բնականաբար պատճառ մը չիկար որ հայ տարրը , իր բնավայրէն դուրս , օտար միջոցաւ տակ , ժողովրդագիտ օտար խառնու մէջ իր հետ չի տանէր այդ միւսեան ինչ անուշանէր՝ այս մասին չի կրելով նոր միջավայրի ազդեցութիւնը :

Եւ ինչպէս ուրիշ տեղեր , Պուլկարիոյ մէջ , ու մասնաւորագէտ մեզ ամենէն մօտ տեղին՝ Վառնայի մէջ հայը չի հրքեր իր տոհմային այդ հիւանդութեան ախտանշանները , որոնք շատ սուր ցըցուածքներով կրկնուի կուգան ու կատարելագէտ կը հաստատեն մեր ըսածը :

Թէ ի՞նչ կրնէ վառնացիին հասարակային օգտին համար , ուսկից ուղղակի կը բխի ամեն մէկ անհատի բարոյական ու նիւթական օգուտը :

Գրէթէ ոչինչ :

Մեր խօսքը մասնաւորներ , շօշափելի ապացոյց մը տալու համար , կրթական գործին վրայ , որուն կարեւորութիւնը ըմբռնուած չէ չենք կրնար ըսել , նկատելով որ սա մէկ քանի օրերուն մէջ վառնացի հայ տղաներու լէգէոն մը դիմար է Պ. Ամիրխանեանցի , խնդրելով որ պատու մըն ալ իրեն ջամբէ գաստիարակութեան այն համեղ հացէն զոր Ռուսահայ միսինոսը բերած է հրամցնելու մասնաւորագէտ նորիկ հայ գաղթականներուն աննեցուկ մանկութեան : Չենք պիտի թէ Պ. Ամիրխանեանց պիտի յօժարի՝ իր յարկին ներքեւ տեղ մը յատկացնել ոչ նուազ աննեցուկ այս տըղաքներուն ալ . բայց այս ցուալի իրողութիւնը գերազանցապէս կուգայ կապացուցանէ թէ վառնացի չնիկ հայութիւնը գիտակին հաւառակ կողմէն կը գիտէ այն միջոցները որոնցով պիտի կրնան գաստիարակուիլ կրթութեան սովէն տառապող հայ պատանիները :

Իբր տարի մը առաջ՝ անակընկալ աղէտ մը միւսիւր գարձուց վարժարանին շէնքը : Նոր վարժարան մը կառուցանելու համար հարկ եղած դրամին մէկ մեծ մասը պատրաստ էր . հանգանակութեամբ՝ պակասած մասն ալ պիտի գոյանար , ու կրթութեան խընդիրը լուծուէր քիչ տոնուան մէջ : վառնացիին պարտքը չէր իսկոյն թեւերն հանգրիճել ու հոգով մարմնով գործը հետապնդել : Անոնք որ ազգին զեկը վարելու հանգամանքն ու իրաւունքը կը վայելէ , անտարբերութեան ախտով վարակուած , կըսեն անշուշտ . « վարժարանը տարի մը , երկու տարի , երեք տարի ետքը չ'նուի , ի՞նչ հոգ և ի՞նչ քնատ » :

Աւելին կայ :

Նախորդ թաղական խորհուրդի օրով , համագումար ժողով մը ինն հօգիէ բաղկացեալ մասնախումբ մը կը կազմէ գալուցին շինութեան համար պակասած գումարը ժողովուրդէն հանգանակելու : Թաղ

խորհուրդը նիստի կը հրաւիրէ այս մասնախումբը , որ բնաւ չի պատասխաներ :

Արդի թաղական խորհուրդը կը հրաւիրէ նոյն մասնախումբը որ գործի ձեռնարկէ : Հրաւերին երեք անձ միայն կը պատասխանեն . միւսները ձեռնպահ են , այսինքն անոնցմէ որոնք փիլիսոփայօրէն կը խորհրդածեն թէ « ազգին գործը մեզի՞ ի՞նչ , թող ուրիշները մտածեն » :

Պատիւ իրենց :

Հիմ , թաղ . խորհուրդը ստիպուած է ուրիշ համագումար ժողով մը կազմել . յոսանք թէ ալ այս անգամ անտարբերութիւնը իր սովորական դերը չպիտի խաղայ :

Ե

ԱՐՁԱԳԱՆՔ

Գաւառացի ազգային մը որ տեղւոյն վրայ ուսումնասիրած է այն խոր վերքերը որոնցմէ ազգը կը տառապի , և որ իր ուղղակի բաժինը ունեցած է այդ ցաւերէն , ինծի պարզ ալ արգարացի դիտողութիւն մը ըրաւ :

Մեր ամենէն կարեւոր թերթերը , ըսաւ , երբեք առիթ մը չեն փախցնել եւրոպական տէրութիւնները հարուածելէ , առարկելով թէ անոնք չեն միանար ազգերինս ազատելու թուրքին բարբարոս տիրապետութենէն : Եւ վարմանամ որ նախ համերաշխութեան օրինակը իրենք չեն ուզեր Եւրոպայի տալ , միացնելով այն կուսակցութիւնները որոնց օրկանը կը կազմեն :

Ինչպէ՞ս կուզեն որ եւրոպեան այնքան բազմաթիւ և հակոտնեայ շահեր հաշտուելով բարեաց հեղինակ թափեն մեր գլխուն , մինչ իրենք իսկ , որ նոյն սուրբ նպատակն ունին , նոյն վեհ զգացումներով տոգորուած են , նոյն զոհողութիւններն ընելու պատրաստ են , որ եղբայր կն վերջագէտ , իրարմէ անջատ ու հեռու կը մնան , թղթեղէն վախ ուրմը անյաղթելի լեռներ նկատելով որոնց վերայէն մերթ թոյն ու ժահր կը ժայլքեն իրարու :

Փափաքելի է որ , շարունակեց մեր բարեկամը՝ հետզհետէ բռնկելով , վերջագէտ աւելի պաղարեամբ գիտուի կացութիւնը , տեղեւ համար մեր տաժանելի վիճակը իր ահաւել բոլոր մերկութեանը մէջ , որ վայն վերջնականագէտ բարեօրելու համար հանձնար , արմատական և վճռական միջոցներու դիմուի . զի ընկերութիւններ , հիւանդանոցներ , պատապարաններ և մասնաւորներ , որքան ալ բարեացակամ որամագրութիւններ ցոյց տան , դարձեալ չի պիտի կրնան զոհացում կամ գէթ վայրկենական միջոցաւ

բանք մը տալ մեղի, նոյն իսկ եւ թէ բարեաց մէկ մասնակից թաւ գտիր գլուխներէ բխի:

Այս ալիքներէն մէկը գտնուի գաղափարն իրապէս է իր բարձր նախադասութեան ներքին հայտնաբերումը ընկերութիւն մը կողմէն եւ արդէն քառասուն հազար ֆրանկի չափ հաւաքած ու մէկ մասն ալ կողակա զրկած է՝ այն տեղի հոյ գաղթականաց վիճակը բարեփոխելու համար:

Այս բարեփոխման հիմնի վրայ թաղութիւն է սրուն մինչեւ գաւ հալից ամբողջ սլացքը են հայուն հաւաքանքները եւ զայն յուզելու են այնքան խորին կերպով:

Ո՞վ պիտի կարծէր որ Եւրոպայի այդ մանախաղաղ երկրին մէջ այնքան զգոյշ սրտեր կը բաբախնէին:

Հայը որ մինչեւ ցորդ այնչափ անտեղի շնորհակալութիւններ չը առնէր է տալին անգին, այս անգամ կը զգայ թէ անկեղծ եւ բարեփոխութեան զգացում մը իր սիրտը կը շնորհակցէ հանգեպ Եւրոպայի այս հանիին՝ անոր ինքնաբերական եւ մարդասիրական ցոյցին համար:

Գանիայ թաղութիւն յիշած առիթներ չի մոռնա՞նք նաեւ ուրիշ վեհապետական մը, Զարուհին, որ իր կարգին, օսմ. վերաւոր զինուորները ստուար թուով շարժուն անկողիններու հիւանդանոցով մը օգտուելու վսեմ ներշնչումը ունեցած է, հոգալով միանգամայն բժշկներու, պաշտօնէից եւ տեղեւոր ծախքերը:

Քրիստոնեայ վեհապետական մը կողմանէ խաղաղութեան քաջարի պաշտպաններուն ի նպաստ եղած զթոյլ եւ համարումի այս ցոյցը սքանչալի մը ազդեցիկ մը միայն կը լսէ ամեն սրտերէ:

Վիլհելմ կայսեր անունը բոլոր մեղիներու մէջ օրհնութիւններով արտասանուելէ ետքը, բնական էր որ երկու սեռի բոլոր վեհապետներն ալ փափագէին իրենց արդար բաժնը ունենալ այդ անմեղ բարեփոխման եղանակը օրհնութիւններէն որոնք այնքան սիրուն բաներով լեցուն տրտուութիւն մը ամենի կը խոտանան:

Ո՞վ երջանիկ հեմէրիններ, որ այնքան քրիստոնեայ շուրջ ու փշուր ընկէ ետքը, կայսեր բնականաբար, յոյն վերաբերմանը աչքերը ստիճով հանելէ, եկեղեցիներն ու սրբազան անօթները աղտոտութեանց ընդունարաններ դարձնելէ ետքը այժմ գլխով իրենց մատաղ զոյրերու փայտաշէններէն լուսն հանգիստ կը մարսեն իրենց մեծարուած փիլիսոփայութեան հալիցներ, մեղկօրէն երկնաշէն բարեփոխութեան հաւատարմութիւն նուերած հեշտօրօր անկողիններուն մէջ:

Գամեք-Արշալիր

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Պարկազ, 3 Ապրիլ

Տեղւոյս ազգային գործընթացը իր իրաւ վիճակ մը ունենալու երեւոյթն առնել սկսած էին. եկեղեցւոյ տարածքէն արտաքին եւ աւան ինչ իր բնական ընթացքին մէջ մտնելու վրայ էր. զրեթէ վերջացած էին բոլոր այն անհամաձայնութիւնք որք բաւական յուզիցին շատերու մտքեր եւ մեծ վնասներ պատճառեցին ազգային գործերու: Արդի թաղական խորհուրդը ըստ օրինի ընտրուած է ժողովրդային քուէարկութիւնով ընդ նախագահութեամբ Գեոր. Տ. Արսէն վ. Վեհաօրհնի, բոլորովին չէզոք եւ բարեհալ անձնաւորութիւններէ, որոնք լռիկ մնչիկ կաշխատէին իրենց գործին, Ս. Եկեղեցւոյ պայծառացման, վարժարանի յառաջդիմութեան հն. եւ ոչ ոք զօգնութիւն մը ունի իրենց նկատմամբ:

Ապրիլ 21ին յանկարծ պաշտօնական թղթով փակցուեցան կառավարութեան կողմանէ քաղաքիս փողոցներուն մէջ, ծանուցանող թէ ապրիլ 27ի կիրակին հայոց եկեղեցւոյ համար թաղական խորհուրդ պիտի ընտրուի, ընդ հսկողութեամբ կառավարական պաշտօնականներու. պաշտօնաթուղթին մէկ պատճենն ալ թաղական խորհուրդին զրկուած էր: Թաղական խորհուրդն ի տես այս պաշտօնաթուղթին եւ տեղի ունեցած յայտարարութեանց՝ անմիջապէս ի ինքն գումարուելով եւ չհասկնալով այս եղիւթիւնն շարժառիթը, կառավարութեան գիւղաց, բայց որոշ պատասխան մը չառնելուն վրայ՝ պարտաւորեցաւ Սօֆիա հեռագիր ուղղել, որով բայտարուած էր Պարկազի հոյ ժողովրդեան խաղաղ ու ազատ վիճակը, ամենեւեմ հետեւ կանոնաւոր թաղական խորհուրդ մը ունենալը եւ բնաւ մի ու եւ անհամաձայնութիւն չգտնուելը, եւ կը բողոքէր տեղական իշխանութեան տնօրինութեանցը գէմ: Հակառակ անհամբեր սպասումներու, մինչեւ կիրակի պատասխան մը չեկաւ:

Ապրիլ 27, կիրակի, եկեղեցւոյ Ս. Պատարագի աւարտումէն անմիջապէս յետոյ, կառավարութեան եւ թաղականութեան կողմանէ մէկ մէկ պաշտօնականներ ստիկաններով միասին եկած կեցած էին Եկեղեցւոյ գաւթի վրայ: Բոլորովին միասին՝ որոշումը գործադրելու համար: Ժողովուրդը ապուշ կը կրթէր ի տես կառավարութեան մարդոց եւ ստիկաններու որոնց ինչ ըլլալը չէին գիտեր շատեր: Վերջապէս տեղւոյս Սոֆիայից կան փոխանորդ բահանան եկեղեցիէն դուրս ելլելով մօտեցաւ տունց եւ բոցատրեց թէ կանոնաւոր թաղական խորհուրդ մը կը

գտնուի, թէ գործերը օրինական սահմանի մէջ կը յառաջանան, թէ իրենք բոլորովին զուր տեղ ձանձառութիւն չը յանձն առած են: Ասոր վրայ կառավարական պաշտօնեայք մեկնեցան այդ օր, յաջորդ կերակրի ձգելով գործը: Հիանալով ընդ փոքր կը հաղորդեմ ձեզ:

Գաղթականաց յանձնաժողովը ցրուած է արդէն. Մատթ. Ալէն, բարեպաշտ անգլուհին, ապրիլ 12ին մեկնեցաւ այս առիթն, իր հետ տանելով մեր բոլորին ալ երախտագիտական զգացումները: Դեռ անգոյ ժամանակ մը օրական 30 հաց պիտի որուի ամենախեղճ զաւակարգին: Մասնաւոր շնորհակալութեան արժանի է այն փոյթեանքն գործունէութիւնը եւ աշխուշ հսկողութիւնը զոր ցոյց տուաւ յանձնաժողովը իր պաշտօնավարութեան ամբողջ շրջանին մէջ:

Պարկազի եկեղեցւոյն համար նշանաւոր օր մըն էր այս տարւոյն Զատիկը, զի նմանը չաես նուած հայութիւն մը եկած խըռնուած էր եկեղեցւոյ ներսն ու դուրսը, գոնէ հոն իր հայրենիքի կարօտը մասամբ մոռնալու տեսնելով, եւ իր կրօնական վերացմանց մէջ իր վշտերը թաղելու յառաջ: Տար երկինք որ այս վերջի Զատիկը լինէր օտար հողի վրայ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ
ԵԱՄ
ՄՐՄՈՒՆՁ ՀԱՅԿԱՍՏԱՆ

Սոյն Երգարանը որ կը բաղկանայ առաւել քան 100 երեսէ, կը պարունակէ շատ մը հին եւ նոր ազատ երգեր, զորս այժմ ժողովուրդն տիրութեամբ կ'երգէ:

Փափաքողք կրնան ստանալ զայն՝ փոխարէնը 1 ֆրանկ խրկելով իրմբ բաղրութեամբ, կամ գիւմելով հետեւեալ հասցէներուն.

Տեսարկ	
Արիս	Գուրպէթ. Ռուսնուգ
Տիգրան	Անէման Ծուրու
Կարապետ	Թորոպալ. Սիլիստրէ
Մարտիրոս	Բէնտիկեան Պարկազ
Խաչիկ	Թահաֆեան Սիլիկէ
Անէմ	Նէմիւրճիպլ. Ֆիլիպէ
Իսկէնտէր	Արաւանեան Տօպրիչ
Յովհաննէս	Պալէոնեան Պուրթէ
Թէօֆիլ	Թէրզեան Դէօսալնի
Ասատուր	Բրուտեան Գահիրէ
Տիգրան	Արաւանեան Աղէքսանտրիա

Աղք. վարժարանաց համար՝ երբ գէթ 10 հատ կ'ուզուի, 20 առ 100 զեղչ կը լինի:

ԹԻԻՐԲԵՐԻՆ ՎԱՅՈՒՆԻՔԵՐԻ

Թիւրքերը Լեմէնիլէրէ հարմըջ օլաղլարը վահշիլիքերի թէսաւ լիա վէ Եպիստոսա տառի թէք. րար իտէյօրլար. պաւ պապտէ Էվրոս կաղէթալարընտա պէր վէճհի աթի օգունմուշ տըր:

Տէյլի Քրօսիքլըն Աթինատան ալաղլը պիւր թէլէկրաֆ պիւտիւր. միշ տիւր:

«Եպիստոսա թիւրքերին իճրա իթիթիքերի վահշիլիքեր հաղգըն. աա շիւրհէսիլ օլմադ իշիւն, րէի. սի վիւքէլա իլէ պիւր մուլազաթ. տա պուլընտըմ»:

Եպիստոսան կէմիշ օլան միւ. թէսաթա մէքթուալարը, թէլէկրաֆլար վէ րարօրթլարը Մ. Բա. լի պանա կալաղ իթիթ. մէքէլը Էվրադ միւքէմիլ տէրէճէտէ վէ Եպիստոսան միւթալը սիւ. րէթտէ թատիգ իտէյօրքի, թաւ. րար վէ Գաթիսիքիա տէրու. նինտէ վաղը 14 րէօյլէրտէն գաշ. մոյա մուլաֆադ օլմայան պիւ. թիւն գարըլարը վէ չօնուգլարը թիւրքեր րէստիգտէն սօնրա րէօյ. լէրի կապուպ, քիւլ իթմիշլէր տիւր: Գարըլարտան պաղըլարը Զալուկա տաղընա գաշմըջ վէ պա. ղըլարը պաթաղըլարտա սաղ. լանմըջլար տըր: Ալէրտէն 20 քիշի տըլըգտան վէ սօվուգտան Էօլիւմ տէրէճէսիլն Գալա տօնան. մասընա գօյըլարը: Թէլէկրաֆ. լար սուրէթի շէյթանիլէտէ իճրա օլընան հալլէրի մէյտանա գօյմադ. տա տըլար. կանի չօնուգլարը անալարըն կէօղլէրի Էօնիւնտէ քէսիշլէր, զըզարաաշարընըն Էօնիւնտէ ուֆադ գըլլարա ֆիլիլ շէնի իճրա իտուպ, Էօլիւրմիւշ. լէր տիւր: Գամարինա քէօյլէնտէ պիւր թաշ երինտէ գալմիւմըջ տըր. էրքէլէր արալան կիպի ճէնկէ. շիւպ, կալընըզ տիւլմանըն քէս. րէթթիւնտէն տօլայը մաղլուպ օլաւ. լար. գարըլար չօնուգլարը իլէ պէրապէր գաթիլլէրին Էօնիւնտէն գաշարըլար վէ նամուլարընը վի. գալէ իթմիշ օլմադ իշիւն, Եւր. սէք ուշուրուլարտան աշաղը ա. թըլարըլար:»

Թէսալիտա տառի թիւրքեր. րին իճրա իթիթիքերի վահշիլիք. լէրի Լա Բաթրի շաւ Էօլտա կաղմըջ տըր:

«Թիւրքալա գուրպիւնտէ վաղը րապսիստա նամ քէօյտէ թիւրք. լէր պիւթիւն գարըլարըն վի 10 հալընա գատար գըլլարըն րըղ. լարընա կէշիշլէր. վէ կիթ. տիքլէրի վաղըթ 10 քիշիլ տէ պէրապէր կէթիլարալէր, պուն. լարըն նէրէտէ վէ նէ հալտէ պա. լանտըլլարը պիլինմէյօր:

Թիւրքալա տառի թիւրքեր. րին իճրա իթիթիքերի վահ. լարըլա սաղ կաղաղլար: Տի. կէր 3 տաքէրին տէ կէօղլէրին սիւնկիւլէր իլէ օյարլար:

